

ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ № 1

Հայկական ՍՍՌ ժողովածուներից կից Պետական ձեռագրատուն
(Մատենադարան). Երևան, 1941 թ., էջ 249: Գինը 20 ռ.:

Հայկական ՍՍՌ ժողովածուներին կից Պետական ձեռագրատունը (Մատենադարանը), հետևելով գիտական հիմնարկների մեջ ընդունված կարգին, հրատարակել է իր անդրանիկ «Գիտական նյութերի ժողովածու» № 1-ը, պրոֆ. Գ. Աբովի խմբագրությամբ: Մատենադարանի վարչության այդ քայլն արժանի է ամեն խրախուսանքի և շնորհակալության, որովհետև նրանով հիմք է դրվում Պետական ձեռագրատան (Մատենադարանի) անբավ հարստությունները լայն գիտական աշխարհին մատչելի դարձնելու գործին, մի խնդիր, որ շատ կարևոր նշանակություն ունի մեր կուլտուրայի պատմության ուսումնասիրության համար և իրոք մտնում է Պետական ձեռագրատան (Մատենադարանի) վարչության և գիտական աշխատողների անմիջական պարտականությունների մեջ:

Դեռ առաջ դրված բավական ստվար հատորը պարունակում է մի շարք ուսումնասիրություններ և տեքստեր: Առաջին ուսումնասիրությունը պատկանում է պրոֆ. Ս. Հայրապետյանի գրչին և կրում է «Անանիա Շիրակացու կյանքն ու գործունեությունը» վերնագիրը. սա Ս. Հայրապետյանի դիսերտացիայի մի հատվածն է, որ կարդացվել է Մատենադարանի 1940 թ. հոկտեմբերի գիտական սեսիայում: Ս. Հայրապետյանն իր հոդվածում աշխատում է պարզել Անանիա Շիրակացու կյանքի ու գործունեության հետ կապված մի քանի խնդիրներ—էրբ և ռոտեղ է ծնվել Շիրակացին, ի՞նչ կրթություն է ստացել և ռոտեղ, ի՞նչ գործունեություն է ունեցել և ի՞նչպիսի միջավայրում է գործել, ի՞նչ հալածանքներ է կրել, ինչու համար և այլն: Ս. Հայրապետյանը դալիս է այն եզրակացության, որ Անանիա Շիրակացին ծնվել է «Անի բերդի մերձակա համանուն Անի գյուղում» շուրջ 632—637 տարեթվերի միջև: Նրա այս հաշվի զլխավոր կովանը Սամվել Անեցու վկայությունն է (էջ 85), որի համաձայն հայոց ՉԺԲ (=712) թվին դեռ կենդանի էր Անանիա Շիրակացին, ուրեմն և նա չէր կարող ծնված լինել 7-րդ դարի սկզբին, ինչպես կարծում է Ք. Պատկանյանը: Սակայն ինչպես Ս. Հայրապետյանի բերած հաշիվները, այնպես և առհասարակ Շիրակացու կյանքի ու գործունեության վերաբերյալ տարեթվերը հաստատուն չեն և առիթ են տալիս բազմաթիվ առարկությունների: Այսպես՝ երբեք չի կարելի ճիշտ համարել Սամվել Անեցու հաշիվները և նրա տված թվերի հիման վրա եզրակացություններ հանել: Օրինակ՝ Անե-

ցին (էջ 79) Կոմիտասի կաթողիկոսութիւնը գնում է 630 թվին, մինչդեռ Կոմիտասը 628 թվին արդեն վախճանված էր: Վրաց բաժանումը գնում է (էջ 75) 587 թվին, այնինչ այդ բաժանումը եղել է առնվազն 20-22 տարի հետո: Ներսէս Բ-ի կաթողիկոսութիւնը (էջ 73) գնում է 527 թվականին, այսինքն՝ իրականից 20 տարով առաջ: Արշակունյաց թագավորութեան բարձումը, որ տեղի է ունեցել 428 թվին, Անեցին (էջ 70) գնում է 481-ին: Քաղկեդոնի 451-ի հայտնի տիեզերական ժողովը գրվում է 473-ին, Ղևոնդյանց նահատակութիւնը՝ 480-ին, Հաղկերտի թագավորութեան սկիզբը՝ 466-ին (էջ 71) և այլն և այլն, այսինքն՝ նրա դրած թվականների մեջ առնվազն 20-25 տարվա սխալ կա: Նույնիսկ Նիկիայի 325 թվի տիեզերական ժողովը գրվում է 331 թվին, իսկ Կ. Պոլսինը՝ 381-ի փոխարեն 396-ին: Կարծում ենք՝ այսքանը բավական է ցույց տալու համար, որ Սամվել Անեցու դրած թվականները մեծ մասամբ սխալ են և ոչ մի դիտական եզրակացութեան համար հիմք ծառայել չեն կարող: Այնուհետև, եթե ճիշտ համարենք ձեռագրից Ս. Հայրապետյանի հանած այն վկայութիւնը, թե Անանիա Շիրակացին 11 տարվա բացակայութիւնից հետո ուսմամբ ճոխացած 668 թվականին է վերադարձել Հայաստան, այդ դեպքում Անաստաս կաթողիկոսը չէր կարող նրան որևէ հանձնարարութիւն անել տոմարի նորոգութեան վերաբերյալ, ոոովհետև Անաստասը կաթողիկոս է եղել 661—667 թվերին և մեռել է Շիրակացու հայրենիք վերադառնալուց առաջ: Սակայն այստեղ կանգ ենք առնում, որովհետև այս ձևով շարունակելը մեզ շատ հեռու կտաներ և մեր հոգվածը դուրս կգար համառոտ գրախոսութեան սահմաններից: Մեր նպատակն էր մատնանշել, թե ինչպիսի մեծ զգուշութիւն և աշխրջութիւն է հարկավոր, երբ պետք է լինում մեր մատենագիրների մեջ բերած թվականները ճշտել և նրանց հիման վրա եզրակացութիւններ անել: Այսքանով բավականանալով Ս. Հայրապետյանի հոգվածի մասին՝ հիշատակենք միայն նաև, որ էջ 5-ում բոլորովին անտեղի է հիշված Սեդեոսի անունը, որն իր Պատմութիւնը վերջացնում է 661 թվականով և ուրեմն չէր կարող այդ թվականից հետո կատարված տոմարի նորոգութեան մասին որևէ բան գրել, ինչպես և Սեդեոսի մեջ առհասարակ չի հիշատակվում Անանիա Շիրակացին: Նույն էջի վրա պարզ գրչասխալ պետք է համարել անշուշտ Գոհգոթ Գանձակեցի—Կիրալիս Գանձակեցու փոխարեն: Արդյոք նույնպիսի պարզ գրչասխալ է նաև բազմաթիվ անգամներ կրկնվող Տիվբիկոսը, սովորական և ճիշտ Տիւբիկոսի (Տյուբիկոսի) փոխարեն:

Հոգվածի վերջում գրված Անանիա Շիրակացու աշխատութիւնների ցանկում պետք էր նշանակել, թե որ աշխատութիւնը երբ, որտեղ և ում կողմից է հրատարակված:

Երկրորդ հոգվածը գրել է պրոֆ. Լ. Սեմյոնովը՝ «Հայկական տոմարի մի քանի հարցերի մասին»: Այս շահեկան հոգվածը գալիս է այն եզրակացութեան, որ 1) հայերը հին և միջին դարերում սլահապանել են իրենց նազույն, արեգակնային տիպի տոմարը՝ առանց համարյա թե որևէ փոփոխութեան՝ մինչև 14-րդ դարի առաջին քառորդը: 2) Քրիստոնէութեան մուտք գործելուց հետո էլ այդ տոմարն անփոփոխ է մնացել և գործ է ածվել որպես քաղաքացիական տոմար, իսկ եկեղեցական կարիքների համար ընդունվել և գործ է ածվել հուլյան տոմարը: 3) Այս տոմարից հայերը

հրաժարվել են 1317 թվականին (Աղանայի ժողովում): 4) Հայկական արեգակնային տոմարի աստիճանագրող կայացել է 428 թվականի օգոստոսի 11-ին. նման տիպի տոմար հայերն սկսել են գործածել 5-րդ դարի կեսից մեր թվականությունից առաջ: 5) Հայկական դարադրության բնդունելով թվականը պիտի համարել 584 թ., իսկ դարադրված առաջին տարին՝ 553-րդը, ընդունված 552-ի փոխարեն:

Շատ ցանկալի կլիներ, որ պրոֆ. Լ. Սեմյոնովը ավելի հիմնովին ուսումնասիրեր հայկական տոմարը, օգտագործելով նաև F. K. Ginzel-ի Handbuch der mathematischen und technischen Chronologie, Leipzig (1906, 1911 և հետո լույս տեսած) եռահատոր աշխատության 3-րդ հատորի հայկական ժամանակագրության վերաբերյալ գլուխը համապատասխան ցանկերի հետ միասին, և տար մի համառոտ ուղեցույց հայկական տոմարի և նրա հետ կապված հաշիվների մասին: Դրանով նա մեծ ծառայություն կատարեց հայոց գրականությանը ու պատմությանը զբաղվող բոլոր գիտնականներին, որոնց համար դանադան պատճառներով անմատչելի ու անհասանելի են ինչպես Ginzel-ի վերոհիշյալ գիրքը, այնպես նաև Դյուլո-րիեի ավելի հին Recherches sur la chronologie Arménienne, Paris, 1859 աշխատությունը, որոնք մասամբ և հնացած են, ո՛ր չէին կարող աչքի առաջ ունենալ նորագույն փաստերն ու տվյալները հայկական ժամանակագրության մասին:

Դիտարկենք արժեքավորության, հետևությունների զգուշավորության և բերած փաստերի աստիճանականության ու անառակելիության տեսակետից շատ նպաստավոր տպավորություն է գործում Ի. Աբուլաճի «Փարթևի Յխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը» վերնագիրը կրող հոգվածը: Ի. Աբուլաճին, մանրամասն ուսումնասիրելով «Վրաց պատմության» հայերեն թարգմանության ձևագրերի, ինչպես նաև հայկական ու վրացական խմբագրությունների և նրանց առնչության հարցերը՝ գալիս է հետևյալ եզրակացություններին. 1) Կա միայն 4 հայերեն ձևագիր, որոնք անհրաժեշտ են «Վրաց պատմության» հայկական բնագիրը վերականգնելու համար: 2) Ամենահին ձևագիրը, որ գրված է համարվում 13-րդ դարի վերջին, լիովին չի պահպանում սկզբնագիրը: 3) «Փարթևի Յխովրեբայի» հին հայերեն խմբագրությունը թարգմանված է վրացերենից: Թարգմանությունը համառոտ է, ունի և հավելվածներ. թե մեկը և թե մյուսը կատարված են որոշ նկատառումներով: 4) Թարգմանիչը հայ է, գավանանքով միաբնակ, և Դավիթ Շինոզի կրտսեր ժամանակակից: Թարգմանությունը կատարված պիտի լինի 12-րդ դարի երկրորդ կեսում: 5) «Փարթևի Յխովրեբայի» հայերեն թարգմանությունն օժանդակում է մեզ որոշ դադափար կազմելու «Փարթևի Յխովրեբայի» մեր ձեռքը չհասած հին վրացերեն առաջին խմբագրության կազմության մասին: 6) «Փարթևի Յխովրեբայի» հայերեն հին թարգմանությունն օժանդակում է մեզ ճշգրիտ սահմանելու վրացերեն տեքստի՝ հնում հազվագյուտ գործածություն ունեցող բառերի իմաստը: Իր հերթին՝ վրացերեն տեքստի օգնությամբ հայերեն թարգմանության մեջ վերականգնվում են որոշ բառերի ճիշտ ձևերն ու իսկական իմաստը:

Դժբախտարար այս կարևոր հոգվածի մեջ (էջ 35, 1-ին սյունակ, տող 30—34) սպրդել է, արդյոք սրբագրիչները՝ հանցանքով, մի ակնհայտի

սխալ. «ակադ. Զավախիշվիլին, հակառակ Թ. Ժորդանիայի, Յ. Աբուլաձեի և ուրիշների, որոնք այս թարգմանությունը 12-րդ դարին են վերագրում, Բրոսեի և այլ գիտնականների նման կարծում է, որ թարգմանությունը 12-րդ դարի գործ պիտի լինի» (ընդգծումս իմն է: Տ.-Մ.): Էջ 32 ծան. մեջ մոռացված է մատնանշել վկայության կոչված «Հանդես ամսօրյա»-յի համապատասխան էջը:

Հեռույալ հոգվածում Աշ. Աբրահամյանը դնում է «Նախամեսրոպյան հայկական գրականության հարցը» և մանրամասն քննելով թերևս զեռվարժիքները՝ գալիս է այն եզրակացության, որ այդպիսի դիրք է զբաղեցրել թուրքական անպայման եղել է Հայաստանում Ե. դարից դեռ շատ առաջ, բայց այդ գրականությունը թաղվել է մեհյանների ավերակների տակ՝ զոհ դառնալով քրիստոնեության մոլեռանդության: Այս վարժիքը նոր չէ, այն արձարծել են շատ գիտնականներ, բայց լսողիքը մնացել է վիճելի, որովհետև մինչև այժմ ոչ մի փաստական տվյալ չի գտնվել, որ անառարկելի դերակշռություն տար այս կամ այն կողմին: Վեճը տեղի է ունեցել, այդպիսով, ավելի կամ պակաս հավանական ենթադրությունների շարքը, որոնց ապացուցական ուժը, կարելի է ասել, հավասար է միմյանց: Աշ. Աբրահամյանի ներկա հոգվածն էս մեզ այդ մակարդակից չի հեռացնում և ավելի բարձր աստիճանի չի հասցնում: Նկատվում է միայն երիտասարդ գիտնականին հասուկ համարձակություն, որ եղած խախուտ հիմքերով «համարձակ պնդումներ» է անում այնտեղ, որտեղ Մառի նման գիտնականը կարողանում է միայն ասել՝ „Повидимому, на этом же языке составлялись документы и велась переписка, словом была письменность. Возможно также, что им пользовались не только в устных беседах и толкованиях, но и в письменных памятниках, что он был литературным языком еще в языческой Армении. Но утверждать это пока еще нельзя“. (ընդգծումներն իմն են: Տ.-Մ.): Իսկ այդպիսի նախամեսրոպյան, թեկուզ քրիստոնեական, գրականության այրուքների մասին Մառը նույն գգուշավորությամբ ասում է՝ „Алфавитом они могли пользоваться хотя бы иноземным“ (Н. Марр, Грамматика древнеармянского языка, СПб, 1903, стр. XXVIII—XXIX): Մեր կարծիքով՝ այս լսողի մասին, գիտության ներկա տվյալներից ելնելով, ավելի բան ասել, քան ասել է Մառը, հնարավոր չէ:

Հետևյալ հոգվածներն են՝ Туманян, Т. Г. „О таблице полигональных чисел А. Ширакаци“ ուսերեն լեզվով, Հ. Աբրահամյանի «Թղթի գործարան Հայաստանում» հետաքրքրական ուսումնասիրությունը Երևանի ծագողադարձ Իսահակ եպիսկոպոսի պաշտոնական գրություններով, պրոֆ. Սեմյոնովի «Ձեռագրական հին տեղեկություններ արկտիկայի մասին» Հովհաննես Երզնկացու մի շատ ուշագրավ հատվածով, Վ. Համազասպյանի «Մոնղոլների կողմից Անիի գրավման տարեթվի ճշտումը», որի մեջ Համազասպյանն ապացուցում է, որ Անիի գրավման տարեթիվը չպետք է համարել, Չամչյանին և ուրիշներին հետևելով, 1239-ը, այլ 1236-ը, որի համար, բացի այլ տպացույցներից, բերվում է հաև ձեռագրական վկայություն Պետական մատենադարանի № 8100 ձեռագրից:

«Գիտական նյութերի ժողովածու»-ի այս մասը փակվում է Վ. Ստեփանյանի «Հայաստանի և նրա մերձակայքի երկրաշարժների վերաբերյալ

պատմական նյութերը Մատենադարանում» հոգվածով, որը չունենալով լրիվ լինելու հավակնություն, մի ամփոփ գաղափար է տալիս, թե Մատենադարանում երկրաշարժի վերաբերյալ ինչպիսի անսպառ փաստեր կան, որոնք պետք է ուսումնասիրվեն և օգտագործվեն «մեր անտիսեյսմիկ շինարարության բյուրոյի պրակտիկ աշխատանքների ընթացքում»:

«Գիտական նյութերի ժողովածու»-ի երկրորդ մասը կրում է «Տեքստեր» ընդհանուր վերնագիրը, թեև այստեղ էլ տեքստերից առաջ կան ներածական համառոտ ուսումնասիրություններ և առաջաբաններ: Այդ տեքստերը վերջված են գիտության զանազան ճյուղերից և բոլորն էլ հետաքրքրական են իրենց տեսակետով: Այս մասում գետեղված նյութերը հետևյալներն են. 1) Աշխեն Հարությունյան, «Դեղագրեր». 2) Աշ. Արրահամյան, «Մարտիրոս դի Առաքելի ժամանակագրությունը. 3) Քյուչում Արուքիճի «Պատմություն Թահմազ զուլու» աշխատությունը, որ տաճկերենից թարգմանել է Մ. Խոբխոնունին. 4) Պրոֆ. Լ. Սեմյոնով, «Աստղաբաշխական բնույթի քաղվածքներ հայ պատմադիրներից», որտեղ բերված են հին հայերեն տեքստերը՝ դիմացը դնելով համապատասխան ռուսերեն թարգմանությունը: Հոգվածի վերջում գրված է մի ամփոփիչ աղյուսակ հիշատակված աստղաբաշխական երևույթների վերաբերյալ: Այս հոգվածի մասին մի երկու խոսք ստորեւ: 5) Լ. Խաչիկյան, «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ». 6) Աս. Մնացականյան, «Դիտողություններ հին տաղարաններում կատարված մի շարք աղավաղումների մասին». որի տեղը ավելի շուտ ժողովածուի 1-ին մասն էր: Դիտողություններին կցված են մի շարք անտիպ բանաստեղծություններ ու վարիանտներ (Թլկուրանցու, Արտամետացու, Սայաթ-Նովայի), որոնք վերջանում են «Առյուծ և էջ» առակով: 7) Հար. Արրահամյան, Նյութեր Արուսիյանի մասին. 8) Հար. Արրահամյան, Նալբանդյանին վերաբերող արխիվային վավերագրեր, որոնք մինչև այժմ տպված չեն եղել:

Այս նյութերից պրոֆ. Սեմյոնովի «Աստղաբաշխական բնույթի քաղվածքներ»-ի մասին պետք է ասել հետևյալը. նախ՝ ինչպես երևում է, այդ քաղվածքները լրիվ չեն. նկատի առնված և այդ ուղղությամբ ուսումնասիրված չեն բոլոր մատենագիրները. օրինակ՝ մեջ բերված չէ Հովհաննես կաթողիկոսի հիշատակած արևի խավարման դեպքը (Հովհ. կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, Մոսկվա, 1853, էջ 181). «Եւ իբրև խաւար գիշերին ի բաց եղեալ և լոյս առաւօտին ծագեցաւ, յանկարծակի յական թօթափել դարձեալ խաւար գիշերային դմօք արկաւ. ընդ որս և առհասարակ սքանչացեալ մեր՝ տեսաք, զի խաւարեալ էր արեգակն յառաւօտին պահու»: Պրոֆ. Սեմյոնովը, որ ինքն էլ հետո նկատել է այս մի բացը, պետք է այս ուղղությամբ քրքրի մեր բոլոր պատմագիրները՝ բոլոր հիշատակությունները երևան բերելու համար:

Երկրորդ՝ քանի որ այս հիշատակությունները մեծ կարևորություն են ներկայացնում որոշ պատմական դեպքերի ժամանակագրությունը որոշելու համար, պրոֆ. Սեմյոնովը մեծ ծառայություն մատուցած կլիներ, եթե ճշտեր աստղաբաշխական այդ դեպքերի իսկական տարեթվերը, որովհետև, ինչպես վերևում Սամվել Անեցու օրինակից տեսանք, չի կարելի մեր հին պատմագիրների տված թվականներն առանց այլևայլության ճիշտ ընդունել և նրանց վրա գիտական կառուցումներ կատարել:

Ի վերջո պետք է դիտել, որ երևի տպարանական անզգուշություններ կամ որևէ այլ անրադատելի թյուրիմացություններ հին հեղինակների շարքն է ընկել և իրեն աղբյուր գործածվել Օրմանյանի «Ազգապատումը» (էջ 132), որ պետք է լիներ միմիայն ծանոթագրությունների և ոչ թե տեքստերի մեջ՝ իբրև բացատրություն Սմբատի, Ուռհայեցու և Լաստիվերացու հիշատակած արևի խավարման: Էջ 134 ծանոթ. 2-րդ սյույն է տալիս, որ Օրմանյանի այդ ամբողջ հատվածը Սեմյոնովի կողմից էլ սկզբնապես մտածված է եղել իբրև Լաստիվերացու հատվածի ծանոթագրություն:

«Գիտական նյութերի ժողովածուն» իսկապես փակվում է Առոտ Աբրահամյանի կազմած «ՀՍՍՌ Մատենագրարանի գրչագիր մանր ժամանակագրությունների» համառոտ բիրլիոգրաֆիայով: Ճիշտ է Արրահամյանի այն գիտողությունը, թե այդ մանր ժամանակագրությունների դասավորումը ժամանակագրական կարգով, մշակումն ու հրատարակումը շատ կարևոր մի գործ է: Դժբախտաբար, ժամանակագրական կարգով դասավորելու այդ աշխատանքը կատարելու և ապա միայն բիրլիոգրաֆիան հրատարակելու փոխառեն, որ ավելի երկար ժամանակ կստանա՞նք, այստեղ ժամանակագրությունները դասավորված են ըստ գրչագրերի համարների, որ բոլորովին տնայտակահարմար է: Հիշատակված է ընդամենը 62 ժամանակագրություն, սակայն նրանց մի մասը կրկնվում է մի քանի անգամ, օրինակ՝ բաղմախիվ անդամներ կրկնված է Մովսես Երզնկացու «Համառոտ ժամանակագրություն հայոց պատմության» գրվածքը: Միթե հնարավոր չէր շատ կարճ ժամանակ գործադրելով մի համարի տակ ամփոփել միևնույն նյութերը՝ տալով միաժամանակ այն ձևագրերի հաջորդական համարները, որտեղ գտնվում են նրանք: Մենք այս առարկությունը դուրս չանհանք, եթե վերջում գրված լիներ զեթ համառոտ անվանացանկ, որ հեշտացներ այս կարևոր բիրլիոգրաֆիայի գործածությունը:

«Գիտական նյութերի ժողովածուն»-ի վերջում ղեկավարված է Վ. Հասաբաբյանի «Հայոց ականավոր դորավար Վասակ Մամիկոնյան» հոդվածը: Այս հոդվածը գիտական ուսումնասիրություն չէ, այլ հայտնի դորավարի գործունեության հանրամատչելի նկարագիր, ինչպես նշում է խմբագրությունը տողատակի ծանոթագրության մեջ. այն կարող էր հրատարակվել ուրույն նպատակով որպես առանձին գրքույկ, բայց, մեր կարծիքով՝ այն չպետք է մտներ «Գիտական նյութերի ժողովածուն»-ի մեջ:

Գիրքը սրբագրված է, դժբախտաբար, անփուլյթ կերպով. շատ են սրտնեղություն պատճառող վրիպակները: Մենք ավելորդ ենք համարում մեկ-մեկ հիշատակել դրանք. մի երկուսը միայն անհրաժեշտ ենք համարում մատնանշել. էջ 15, 2-րդ սյունակ, 11 տող՝ 17-րդ դարը պետք է կարդալ 7-րդ դար: էջ 94—95 երեք անգամ հիշատակված տարեգրությունը պետք է անշուշտ տարեգրություն կարդալ. էլ չենք խոսում հայրուր, այրուն բառերի մասին, որոնք կրկնված են մի քանի անգամ և պետք է լինեն հայրուր, արյուն: Էջ 136 տողատակի ծանոթագրությունը կա, իսկ թե տեքստում որ կետին է վերաբերում այդ ծանոթագրությունը, նշում չկա: էջ 138 հակառակն է. տեքստում կա ծանոթագրության համար գրված նշանը, իսկ համապատասխան ծանոթագրություն չկա տողատակում: էջ 161 ՅԿԵ (355) պետք է իհարկև ՅԿԵ (365) կարդալ. էջ 169 Անաստասի կա-

թուղթիկոսություն տարիները (661—697) պետք է կարդալ (661—667) և այլն և այլն:

Նկատվում են զանազան հոգվածներում հստե կրկնություններ և փքուն ոճ, որոնցից անհրաժեշտ է խուսափել դիտական բովանդակություն ունեցող հոգվածներում:

Վերջացնելով այս համառոտ գրախոսականը՝ չենք կարող չարտահայտել մեր ջերմ ցանկությունը, որ Պետական ձեռագրատան (Մատենադարանի) վարչությունը հաջողվի տարեկան գոնե մեկ այսպիսի ժողովածու հրատարակել ավելի բնորոշ ու ավելի ճոխ բովանդակությամբ, դիտարկող շեշտը դնելով ձեռագրատան բաղմամբիվ չափազանց արժեքավոր մանր տեքստերի հրատարակության վրա: Միաժամանակ անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն նվիրել ժողովածուի տիեզերական խմբագրությանը և բարեխիղճ սրբագրությանը:

Ե. Տ.-Մինասյան